Կանիաշիր

Մակերես՝ 3.86կմ^2

Բնակչություն՝ 345

Գյուղ Արագածի տարածաշրջանում: Մարզկենտրոնից գտնվում է 49 կմ հեռավորության վրա:Նախկինում ունեցել է Սանգյար, Սենկար, Քիչիկ, Քիչիկ Զանգի, Քուչիկ Զանգի անվանումները: Գյուղի շրջակայքում կան հին դամբարաններ:

Գյուղը տեղադրված է Արագածի հյուսիս-արեւելյան ստորոտում: Գյուղի մոտ է գտնվում նաեւ Սանգյառթափա լեռը: Տեղադրված է ծովի մակարդակից 2070 մ բարձրության վրա: Կլիման բարեխառն լեռնային է: Ձմեռները տեւական են, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Ամառները տաք են, համեմատաբար խոնավ: Հուլիսյան միջին ջերմաստիճանը տատանվում է 16-18-ի սահմաններում, հունվարյանը՝ -6,-8-ի սահմաններում: Մթնոլորտային տարեկան տեղումների քանակը 450-600 մմ: Բնական լանդշաֆտները սեւահողային տափաստաններ են:

Գյուղի բնակչության նախնիների մի մասը ներգաղթել է Կարսի մարզի գյուղերից: 1897 թ-ին ունեցել է 284, 1922 թ-ին՝ 352, 1939 թ-ին՝ 477, 1959 թ-ին՝ 308, 1979 թ-ին՝ 424, 1989 թ-ին՝ 452 բնակիչ:Յուղի բնակչության թիվը կազմում է 475 մարդ: Սեռային կազմում տղամարդիկ կազմում են 42%, կանայք՝ 58%: Բնակչության մեջ մինչաշխատունակ տարիքի բնակիչները կազմում են 42%, աշխատունակ ները՝ 45%, հետաշխատունակները՝ 13%: Գյուղն ունի առկա 66 տնտեսություն: Ունի դպրոց, գրադարան, բուժկետ, կապի հանգույց:

Գյուղի տնտեսության մասնագիտացման ճյուղը անասնապահությունն է: Զբաղվում են խոշոր եւ մանր եղջերավոր անասնաբուծությամբ: Զարգացած է կաթնամսատու ուղղությունը: Գյուղատնտեսական հողահանդակների հիմնական մասն օգտագործվում է որպես արոտավայրեր, վարելահողեր, խոտհարքեր: Զբաղվում են բանջարաբոստանային, հացահատիկային, կերային կուլտուրաների մշակությամբ: Պահուստային հողերը զբաղեցնում են համայնքի մակերեսի 41%, որոնց մեջ մեծ է արոտավայրերի տեսակարար կշիռը՝ 97հա, ապա վարելահողերը՝ 67հա:

Արդյունաբերություն չունի:

Համայնքի հիմնախնդիրների մեջ կարեւորվում է խմելու եւ ոռոգման ջրի ջրագծերի, գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը: